

Պիվանագիտական ասոցիացիայի անդամներն այցելեցին ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն

Արտաքին գործերի նախարարությանը կից «Բարի գալուստ Հայաստան» դիվանագիտական ասոցիացիայում ձևավորված ավանդույթի շրջանակներում նոյեմբերի 23-ին ասոցիացիայի անդամներն այցելեցին Սաղմոսավանք վանական համալիր և Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՈԱՖ)՝ Լոռիում գտնվող ՍՄԱՐԹ կենտրոն:

Սաղմոսավանք այցի ընթացքում ասոցիացիայի անդամները ծանոթացան վանական համալիրի պատմությանը և մասնակցեցին սուրբ պատարագի:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում տեղի ունեցած շրջայցի ժամանակ Երևանում հավատարմագրված դեսպանների կանայք և կին դեսպանները ծանոթացան կենտրոնի գործունեությանը և իրականացվող ծրագրերին, որոնք ընդգրկում են հստակ կազմավորված ամենօրյա դասընթացներ՝ բլոկչեյն, ռոբոտիկա, ծրագրավորում ու կոդավորում, լեզուներ, երաժշտություն ու պար, գյուղատնտեսություն, արվեստ և այլն:

Ասոցիացիայի նախագահ **Իրինա Իգիթխանյանը** լրագրողների հետ զրույցում նշեց, որ «Բարի գալուստ Հայաստան» դիվանագիտական ասոցիացիան շարունակում է նախաձեռնությունները՝ ուղղված Երևանում հավատարմագրված դեսպանների կանանց և կին դեսպաններին ծանոթացնելու Հայաստանի հարուստ պատմամշակութային ժառանգությանը և ավանդույթներին: Անդրադառնալով այցի նպատակին՝ նա նշեց, որ այս տարի որոշվել է այդ նախաձեռնությանը նոր երանգ հաղորդել՝ օտարերկրյա գործընկերներին Հայաստանը ներկայացնելով վերջին տարիներին երկրում արագ տեմպերով զարգացող տեղեկատվական և թվային ոլորտի լույսի ներքո, իսկ այցելությունը ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոն դրա լավագույն առիթն էր:

Իրինա Իգիթխանյանը մասնավորապես ընդգծեց, որ նորարարությունը և ստեղծագործ կրթությունը Հայաստանի զարգացման օրակարգի հիմնասյուներից են, և շեշտեց, որ Հայաստանը իրապես լուրջ հայտ է ներկայացրել՝ այդ ոլորտները դարձնելու միջազգային հարթակում իր հիմնական այցեքարտը:

«Մեր այսօրվա հյուրերի համար շատ տպավորիչ էր մեր կենտրոնի ծրագրերին ու սաներին ծանոթությունը: Հատկապես, որ ականատես են լինում նման եզակի բանի Հայաստանում, մանավանդ՝ գյուղական համայնքներում: Այս կանանց դերը գյուղերի զարգացման ՔՈԱՖ ՍՄԱՐԹ մոդելի տարածման հարցում առանցքային կարող է լինել», - ասաց Հայաստանի մանուկներ հիմնադրամի հիմնադիր և գործադիր տնօրեն **Կարո Արմենը:**

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 75,000 բնակիչները:

ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին: